

կեան կրօնաւորաց խումբ մի հաստատել ապ հոն ,
պնդէս որ 1318 էն մինչեւ 1321 Եւրոպիոյ թագաւորները և բաւին ժողովուրդները քանի մի նաւաստ կրօնաւորաց և արկաւաղաց միջոցաւ ներկայ եղած կը համարէին Եւրոպայէ մէջ, սրանք հետզհետեւ ուրիշները կը յաջորդէին սուրբ Յարութեան տաճարին մէջ հոգեւոր պաշտօն մատուցանելոյ : Եւ կրնանք յայտնի բռնել ինչպէս որ արդարեւ յաւելցաւ , որ 1318 ին և անկէ շատ ժամանակ ալ անցնելով՝ բաւին կրօնաւորք չէ թէ միայն սուրբ Գերեզմանը այլ եւ սուրբ քաղաքն ալ թողուցին երան :

Ի յաջորդէ :

cois, de manière que de 1318 à 1321, les Souverains et les peuples Latins de l' Europe, n' y étaient représentés, tout au plus, que par les humbles prêtres et diacres, qui se succédaient les uns aux autres pour officier d' après le rite Latin, dans l' Eglise de la Résurrection; et nous devons dire tout au plus, car il est presque prouvé, que vers 1318, et pour long-temps, le clergé Latin avait dû quitter non seulement le Saint Sépulchre, mais encore la Sainte Ville.

Sera continué.

ՄԵՂԹԱՆ Ք

ԵՂԵՆԵ ՆԵՄԵ ՔՈ

Ո՛վ դու հանուրց դուից Հաստիչ յաւիտենից դու ա՛լ Տէր ,
Որ ՚ի բարձանց ՚ի ծոցոց Հօր առ մեզ իջեալ յայց ելեր .
Օգնտանելիա կրեցեր զազէաս ՚ի սէր մարդոցն անաղակ ,
Օր յաղէտից փրկեաց հզօր աստուածային քո դաստակ :
Եւ դառնութեան յայն ՚ի պահուն յորում Աստուածդ իմ մատնիւր ,
Հեղեղատիս այս կեդրոնի անցեր յայնկոյս դու տրտում .
Եւ լի վշտօք անդ խոնարհեալ պաղատէիր առ քո Հայր
Եթէ իցէ ինչ հնարին անցցէ բաժակդ ահաւոր :
Ազգ մի ողջոյն ՚ի մահաբոյր անկեալ բաւիլ արդ հեծէ
Օրհասական հառաչանօք մաշեալ զոգի իւր հիւծէ .
Եւ պաղատի զփրկութիւն , լուր աղաչեմք թշուառին ,
Եւ տուր նմա ՚ի գործմանէն կանգնիլ այժմիկ վերստին :
Տարաւ վշտաց և տանջանաց յուսոյն կալեալ խարխիս պինդ ,
Հատ զըկանաց և գերութեանց համբերատար գոսաւ միշտ .
Սակայն այժմիկ լքեալ անդօր՝ այլ սոկարոյ չունի կար ,
Եւ բաժակին իւր դառնութեան մերժումն ՚ի բաց հայցէ յար -
Հուր , սուր , բեկումն է իւր բաժին վտարանդի իմ աղգին ,
Ասեղութեան ճիւղալ անցաք ժանեօք մահու ըզհոգին
Կեղեքելով մաշէ տակաւ , ծծէ ըզհիւթն կենսական ,
Տուր անցանել եթէ կամիս , Տէր , բաժակին դառնութեան :
Ո՛հ , մութացաւ աղգ իմ՝ ըզսէր , եթող ըզ Տէրդ մարդասէր ,
Եթող զհաւատ , ըզբրբութիւն մատնեալ յեղծում և յաւեր ,
Յուեր անշէն փոխեցաւ արդ և նշաւակ անցորդաց ,
Եւ տակաւին լեղի բաժակն դառն աղէտից իւր չէանց :
Այս դարաւոր ցաւոյ դարման բաց ՚ի բէն , Տէր , չէք այլ որ ,
Հաճեաց ՚ի մեզ , արդ աղաչեմք , զի մի մնացուք մեր անօգ .

Տուր փրկութիւն հզօր բազկաւ այս խաթարեալ իմ ազգին,
 Եւ քաղցրասցի ժանտ դառնութիւն մահահրաւեր բաժակին:
 Ուր մարդկային կասի հանճար և լքանի զօրութիւն,
 Ուր սպառի յոյսն առ ի մէնջ, և ուր արուեստք տեղի տան,
 Լնդ, Լստուած իմ, քո զօրութիւն փոյթ ժամանէ յօգնութիւն,
 Լնդ և բաժակըն դառնութեան փոխի յախորժ քաղցրութիւն:
 Եթէ կամիս, զիտեմք ո՛վ Տէր, զի կարող ես փութապէս
 Սրբել, փրկել, կենսագործել և տալ կանգնումս հրաշապէս,
 Լպա թէ ոչ այս հէք վիճակ իղէ բաժին մեր կենաց,
 Պաշտելի է դարձեալ կամք քո, լիցի բոտ քոյդ սուրբ կամաց:
 Եւ մեք յօժար յաւիտեան
 Հակեալ ճակատ հլութեան
 Կամաց Սէհիդ բարերար,
 Կամք գթութեանդ սպաստան,
 Եւ մինչ յառակ աղեախց,
 Կամեմք յօժար բաժակին:
 Կ. Յ. Ե.

ԼՂԳՅԻՆ ԵՐԺԼՈՒԹԻՒՆ.

Երաժշտութիւնը մարդոց հոգւոյն և սրտին զգացման ուժաշանքն, անոր ծագումը մարդկութեան ժամանակակից (Ճնճ. Դ. 21), իւր ներգործութիւնը իխտ ազդու, և միանգամայն ժողովուրդի մը կոչումութիւնը կրթելու զօրաւոր միջոց մը ըլլալը, յայտնի ճշմարտութիւններ են: Ոչ ապաքէն Որբէտի քնարին որանելիքը, Դաւթի տառնաղիկին ազդեցութիւնները և ասոնց նման գէպքեր հանրածանօթ են. ոչ ապաքէն մարդս ընտպէս երաժշտական ձայններ զգածուելուն համար է որ իւր բոլոր կենացը մէջ անոր ազդեցութեանը ենթակայ է. օրօրոցին մէջ անով կը ննջէ, ուրախութեան մէջ անով կը զուարճանայ, տրտմութեան մէջ անով կը սփոփի, և մինչեւ ի յաւիտեան կանուխեան գուռը անոր տխուր միտման շնորհիւ կ'երթայ: Ուստի ի սկզբանէ հետէ մարդկային ազգը ունեցած է երաժշտութիւնը, և ի գօրծ ոմէր է զոյն իւր կրօնական պաշտամանց, քաղաքական հանդիսից և ընկերական կենաց մէջ: Թողունք մարդկային ազգը, ոչ ապաքէն Հրեղինաց գունդերն ալ իրենց Որբասացութիւնը և Վելուրը երջանակ հոգեղէն հնչմամբ առ Բարձրեալն Կամեմուէլ մատուցանելն քրիստոնէական եկեղեցւոյ մէջ ալ ընդունուած որդական անգութիւն մ'է:

Սակայն ինչպէս որ մարդկային ազգին ընդուն, ընկերական ու քաղաքական վիճակը և կրօնական համոզումը կանալան ազգաց մէջ տարբեր եղած է, նոյն

պէս և երաժշտութիւնն ալ այլ և այլ տարբեր գաղնակներ ու ձայնից դասաւորութիւններ ունեցած է, ազգի մը յառաջադիմութեան, զգացման և միտման համար ընտան ըրիւրին հանգամանայն համեմատ: այնպէս որ ազգ մը որչափ կիրթ ճաշակ, փափուկ զգայում և փառ երեւակացութիւն, նոյնչափ ալ կանոնաւոր ու գեղեցիկ երաժշտութիւն ունեցած է, և ընդհանրապէս ազգ մը որչափ յեռազեմ, կոշտ և անզգայ կամ մեղի ու թող էղած է, այնչափ ալ անգայնակ և անկանոն, կամ մեղի ու թող երաժշտութիւն մը ունեցած է: Հետեւաբար ազգի մը երաժշտութիւնն իւր հոգւոյն և զգացման արտօններն է: Սակայն թողլով այս ընդհանուր տեսութիւնը, մասնաւորեմք խօսքերնիս մեր ազգային երաժշտութեան վերայ:

Ամեն ազգի երաժշտութիւնը որչափ ալ իրարմ տարբեր, այլ հիմնապէս մէկ ըլլալով, միայն թէ ձայնից դասաւորութեան և ներդաշնակութեան կանոններով իրարմէ կը տարբերին, որուն համար մանրօրման օրինակներ ցուցնել զժողովուրդ ըլլալով կը յիշեցնենք միայն ազգի երաժշտութեան և բողոքական տարեւելեան տաճական երկու դիմաւոր ճիւղերը, որոց երաժշտական ձայներու աստիճանները գրեթէ միեւնոյն են և միայն ել և էջի տարբերութեամբ կը զանազանին իրարմէ դաշնակի մտան. այլ հանգերմ այսու շատ եղանակներու մէջ ալ կը համահայնին միմեանց հիմնական կազմութեամբ: Բայց իրարու հետ անմիջական յարաբերութիւն ունեցող սահմանակից